

**ԹՈՒՐՔ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԹԵՎՖԻՔ ՖԻՔՐԵԹԸ՝
ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒԻ ՆԵՐԲՈՂԱԳԻՐ**

ՊԵՏՐՈՍՅԱՆ Տ. Ռ.

Օսմանյան կայսրության պատմության մեջ XIX դարավերջը նշանավորվում է սուլթան Աբդուլ Համիդ II-ի բռնապետական վարչակարգի բազմամյա տիրապետությամբ (1876-1909 թթ.): Աբդուլ Համիդի անհանդուրժողականությունն ուղեկցվում էր բացահայտ ահաբեկչական քաղաքականությամբ՝ հպատակ ժողովուրդների ազգային ձգտումների ճնշումով, զանգվածային ջարդերով, որոնց դրամատիկ օրինակներից են 1894-1896 թթ. արևմտահայերի կոտորածները: Պանիսլամիզմի, միահեծան իշխանության գաղափարակիրն իր կառավարման տարիները պատմության էջերում ամրագրեց որպես «գուլումի» շրջան, Օսմանյան կայսրությունը հասցրեց հետադիմական, տնտեսապես և բարոյապես քայքայված մի երկրի:

Այսպիսի սոցիալ-պատմական համատեքստում հայ ազգային-ազատագրական շարժման զինված պայքարի միջոցներից է դառնում վրիժառությունը՝ որպես ժողովրդական պողոթնումի արտահայտություն, երևույթ, որն արժանացել է ամենատարբեր ու հակասական գնահատականների՝ հիմնավորումից մինչև մերժողական¹: Ահաբեկչությունը, հետապնդելով ազգային-ազատագրական խրնդիրներ, հայդուկային շարժման, զինված ապստամբությունների ու ինքնապաշտպանական մարտերի հետ մեկտեղ որդեգրվում է հայ ազատագրական շարժմանը՝ կարևոր տեղ զբաղեցնելով արդուկհամիդյան բռնապետության դեմ պայքարի հիմնական ձևերի մեջ: Ազգային կուսակցությունների նմանօրինակ գործողությունների մեջ առանձնանում է Օսմանյան կայսրության պատմության մեջ իր նախադեպը չունեցող մահափորձի ձեռնարկը՝ ընդդեմ սուլթանի²: Դեռևս 1904 թ. փետրվար-մարտին տեղի ունեցած Հայ հեղափոխական դաշնակցության երրորդ Ընդհանուր ժողովը (Սոֆիա) ստանձնեց Աբդուլ Համիդի դեմ իրականացվող ահաբեկման գործը, որը հայտնի է «Նժույզի գործողություն» ծածկանունով³: Ձեռնարկի գաղափարը Դաշնակցության հիմնադիր

¹ Գրիգորյան Հ., Ահաբեկչությունը որպես ազգային-ազատագրական պայքարի ձև (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ) (Հայոց ցեղասպանություն. պատճառներ և դասեր, Ազգային հարցի և գենոցիդի ուսումնասիրման կենտրոն, մաս 2, Ե., 1995, էջ 39-72):

² Այդ մասին մանրամասն տե՛ս Երլտրզի մահափորձը, Եղեռնական ատեանի դատավարությունը տեղի ունեցած Պոլսոյ մեջ, 1905 նոյեմբերին: Ստոյգ տեղեկություններ մահափորձի մասին (Նոր օր, թ. 40, Աթենք, 1933):

³ Տե՛ս Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Բ. հատոր, (խմբ.՝ Տասնապետեան Հ.), Պեյրուի, 1985, էջ 104-192:

Քրիստափոր Միքայելյանինն էր, որն էլ վարում էր նախապատրաստական աշխատանքները⁴: Հեղափոխականները հանգամանորեն ուսումնասիրել էին Սելամլըքի արարողությունը (սուլթանի ուրբաթօրյա այցելությունը մզկիթ), Աբդուլ Համիդի տեղաշարժի սովորությունը և հասկացել էին, որ ձեռքով նետված ականը կարող էր վրիպել նպատակից: Հետևաբար, որպես անվրեպ միջոց ընտրեցին ժամացուցային մեքենան: Անհրաժեշտ էր շքեղ մի կառք՝ ընտիր ձիերով, որն առանց կասկած հարուցելու կանգներ մզկիթի բակում՝ հնարավորինս մոտ սուլթանական թիրախին: Վիեննայում գնվում և մեծ դժվարությամբ Ստամբուլ է տեղափոխվում նման մի կառք⁵: 1905 թ. հուլիսի 21-ին՝ Սելամլըքի արարողությունից հետո, Ռուբինայի ձեռքով գործի դրված դժոխային մեքենան պայթեց՝ ոչնչացնելով կառքը, բազմաթիվ մարդկանց... սակայն ոչ Աբդուլ Համիդին: Սուլթանը զրույցի էր բռնվել շեյխ ուլ-խալամի հետ և սովորականից փոքր-ինչ ուշ դուրս եկավ մզկիթի բակից: «Սպանության փորձ սուլթանի դեմ» հոդվածում «Դրօշակ» պարբերականը գրում էր. «Հեռագրական գործակալությունները հաղորդում են, որ ուրբաթ՝ հուլիսի 21-ին՝ Սելամլըքի արարողությունից հետո, երբ սուլթան Աբդուլ Համիդը վերադառնում էր պալատ, մի ռումբ պայթեց մզկիթի առաջ: Սուլթանը ողջ մնաց, բայց իրեն շրջապատողներից մոտ երկու հարյուր հոգի սպանվեց ու վիրավորվեց»⁶:

Ճիշտ է, մահափորձը ձախողված էր, սակայն Աբդուլ Համիդի տազնապան ու հիվանդագին կասկածամտությունը կրկնապատկվել էին: Բազմաթիվ խուզարկություններից ու ձերբակալություններից հետո ոստիկանությունը վերջապես բացահայտում է մահափորձն իրականացնողներին⁷: Դեպքերը մեծ արձագանք և հասարակական հնչեղություն են ստանում եվրոպական մամուլում⁸, սակայն միջազգային հանրությունը հայտնի պատճառներով չէր

⁴ 1905-ին Սոֆիայի մոտ՝ Վիտոշ լեռան լանջին, ռումբի փորձարկման պահին Քրիստափորը զոհվեց: Գործի ղեկավարությունը ստանձնեց Սաֆոն: Տե՛ս **Տասնապետեան Ն.**, Ն.Յ. Դաշնակցությունը իր կազմութենէն մինչև Մ. Ընդի. Ժողով (1890-1924), Աթենք, 1988, էջ 75-76:

⁵ Հմմտ.՝ **Վարանդեան Մ.**, Ն. Յ. Դաշնակցութեան պատմություն, Առաջին հատոր, Պարիզ, 1932, էջ 439-440, **Եազրճեան Գ.**, Ապտիլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պեյրուիթ, 1980, էջ 415-518:

⁶ Դրօշակ, N 8 (161), 1905, օգոստոս:

⁷ Ոստիկանությունը հայտնաբերում է ծնունդով բելգիացի Շորիսին, ով մահափորձի գլխավոր հերոսներից էր: Նա համարձակորեն խոստովանում է իր մասնակցությունը, սակայն հրաժարվում է մատնել իր հայ ընկերներին՝ տալով միայն մահացածների ու փախուստի մեջ գտնվողների անունները: Շորիսը դատապարտվում է մահապատժի, սակայն Բելգիայի և մի քանի այլ կառավարությունների միջամտության շնորհիվ ազատ է արձակվում և վերադառնում է հայրենիք:

⁸ Գերմանական "Frankfurter Zeitung" -ը հուլիսի 22-ի համարում գրում է. «Եթե մահափորձի հեղինակը երեկ իր զարհուրելի հարվածը կես վայրկյան հետաձգեր, սուլթանն էլ, իր զավակներն էլ, պալատականների մեծագույն մասն էլ անտարակույս պիտի զոհվեին: Դուրս նետվեցին այնպիսի թանձր ծիսի ու փոշու սյուներ, որ ամեն ինչ մեկ ակնթարթում կորավ մթության մեջ:

շտապում դատապարտել Համիդի դեմ ահաբեկչության ֆենոմենը՝ որպես այդպիսին:

Արդու Համիդի մահափորձն արձագանք գտավ թուրք անվանի բանաստեղծ Թևֆիք Ֆիքրեթի (1867-1915 թթ.) «Հապաղման մի ակնթարթ» («Bir Lâhza-i Te'ahhur») բանաստեղծությունում: Թ. Ֆիքրեթը ողջունում է մահափորձի գաղափարը՝ այն իրականացնողին անվանելով «Փառապանծ որսորդ»։ «Ey şanlı avcı, dâminin bîhüde kurmadın! (Attın... Fakat yazık ki, yazıklar ki vurmadin!) Ո՛վ, փառապանծ որսորդ, թակարդդ իզուր լարեցիր / Պայթեցրիր, սակայն ափսոս, ափսոս, ափսոս, որ չսպանեցիր»⁹: Բանհամոզված էր, որ եթե մահափորձն իրականանար, ապա կվերանային Օսմանյան կայսրության բնականոն զարգացման արգելքները, և կայսրությունում ապրող ազգերը կարթնանային մղձավանջից. «Silkiri ukûd-i ribka-i asârı, en çetin (Bir yıkudan uyandırır akvâmi dehşetin) Ցնցելով դարեր ի վեր խելված կենսաձևը, ամենախոր / Քնից արթնացրեց վախի մեջ ապրող ազգերին»¹⁰: Պոետի ռոմանտիզմն ակնհայտ է: Նա վստահ է, որ ազատության ու ժողովրդավարության համար բավական է դաժան փառիշտի մահը: Ըստ Թ. Ֆիքրեթի՝ հաջողված մահափորձն իր հետ բարօրություն էր բերելու. «Kanlarla bir cinâyete pek benzeyen bu iş (Bir hayır olurdu, misil asırlarca geçmemiş) Սպանդի չափ արնառատ այդ գործողությունը / Դարերով տենչած բարօրություն կբերեր երկրին»¹¹: Հատկանշական է, թե ինչպես է արտահայտվում բանաստեղծը շեյխ ուլ-խալամի հասցեին. «Lâkin tesâdüf...Âh o kavîler münâdimi (Âcizlerin, zavalluların hasm-ı dâimi) Birden yetiştî mahve bu tedbîr-i hâriki (Söndürdü bir nefeste bu ümmîd-i bâriki) Սակայն պատահական հանդիպումը... Ա՛խ, այդ ուժեղների օգնականը / Թույլերի, խեղճերի մշտական թշնամին (շեյխ ուլ-խալամը - Պ. Տ.) / Միանգամից ավարտին հասցրեց այդ հրաշալի մտահղացումը / Եվ մի ակնթարթում հանգրեց այս երջանիկ հույսի շողը»¹²:

«Հապաղման մի ակնթարթ» բանաստեղծությունը, որ ձեռագիր տարբերակով շրջում էր ժողովրդի մեջ, համընդհանուր արձագանք ստացավ բոլոր խավերի շրջանում: Բնական է, որ այն չէր կարող հրատարակվել «արդուլհամիդյան հետապնդումների» և դաժան գրաքննության շրջանում: Բանաստեղծությունը հրատարակվեց միայն երիտթուրքական հեղաշրջումից

Մուլթանի ամենամոտ մարդկանց շարքում նկատելի էր սաստիկ վախ: Այս ու այն կողմ էին թռչում ու ընկնում մարդկանց ու ձիերի մարմնի կտորներ»: Ավստրիական «Die Zeit» պարբերականը հուլիսի 26-ի համարում գրում է. «Թուրքական թերթերը հայտնում են, որ ըստ կիսապաշտոնական տվյալների՝ 82 ընտանիք և 400 մարդ սգի մեջ են: Ծանր ու թեթև վիրավորների մեջ են 17 զինվոր ու ժանդարմ, 12 նշանավոր թուրք քաղաքացի և մեկ երիտասարդ ավստրոնիս: Սպանված և վիրավորված ձիերի թիվը 70 է, ավերված կառքերինը՝ 32: Մուլթանի մահացած երկու ծառաներն ամեննին էլ վերք չունեին, նրանք մահացել էին սարսափից առաջացած սրտի պայթյունից»: Դրօշակ, N 8 (161), Հավելված, 1905, օգոստոս:

⁹ Tevfik Fikret, Rübâb-ı Şikeste, Bir Lâhza-i Te'ahhur, İstanbul, 2005, s. 306.

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում:

հետո¹³ և բազում քննադատությունների, իսկ հետագայում բանավեճերի ու տարակարծությունների տեղիք տվեց:

Օրինակ՝ թուրք հեղինակների համար անընդունելի և դատապարտելի են Թ. Ֆիքրեթի կողմից ծագումով հայ վրիժառուին «Փառապանծ որսորդ» (şanlı avcı) անվանելը, ինչպես նաև բանաստեղծության մեջ տեղ գտած այնպիսի բնութագրումները, ինչպիսիք են «Փառապանծ պայթյուն» (darbe-i mübeccele), «Վրիժառու ծուխ» (dûd-i müntakim) և այլն, որոնք ներբողում են մահափորձի գաղափարը և այն իրականացնողին¹⁴: Ջուհուրի Դանըշմանը գրում է. «Իրականում ցավագին երևույթ է, որ Թևֆիք Ֆիքրեթը խրախուսում է իսլամական խալիֆի դեմ մահափորձ իրականացնող գաղտնի քաղաքական կազմակերպության անդամներին՝ անվանելով նրանց փառապանծ որսորդ»¹⁵: Ինչպես տեսնում ենք, թուրք հետազոտողը չի «մոռացել» շեշտել Ա. Համիդի «իսլամական» լինելու հանգամանքը: Հասկանալի են երևույթին առավել մեծ խորություն տալու և ազգային հիմնախնդրին դավանաբանականը պատվաստելու նրա ջանքերը:

Թուրք հեղինակները պնդում են, որ Թ. Ֆիքրեթն անտեղյակ էր Աբդուլ Համիդի դեմ մահափորձ իրականացնող հայերի սկզբունքային և իրական դրդապատճառներին: «Սպանելով փառիշահին, ինչպես նաև պայթեցնելով Բարձր Դուռը, Գալաթա կամուրջը, թունելը, Օսմանյան բանկը, դեսպանատները, տեղական և օտարերկրյա կարևոր հաստատությունները և Ստամբուլում բարձրացնելով ապստամբություն՝ հայերը փորձում էին օրակարգային դարձնել հայկական պետության ստեղծումը, ինչպես նաև

¹³ Թ. Ֆիքրեթը բանաստեղծությունն ընդգրկեց իր «Կոտրված քնար» (“Rübâb-ı Şikeste”) ժողովածուի երրորդ հրատարակության մեջ (Tevfik Fikret, Rübâb-ı Şikeste, Üçüncü Baskı, 1326 (1910), Tanin Matbaası, İstanbul):

¹⁴ Թուրք հեղինակները հիմնականում հենվում են այն փաստի վրա, որ մահափորձն իրականացնողը հայկական գաղտնի քաղաքական կազմակերպության անդամ է եղել (տե՛ս Fuat Memet, Teyfik Fikret, Yaşamı, Düşünce Dünyası, Sanatçı, Kişiliği, Seçme Şiirleri, İstanbul, 2008, s. 46): Խորհրդային արևելագետներից շատերը ևս կարծում են, որ մահափորձը կազմակերպել են երիտթուրքերի հետ կապված մի խումբ հայ հեղափոխականներ (տե՛ս Գարբուզова В. С., Поэты Турции XIX века, Л., 1970, с. 84): Ոմանք էլ եզրակացնում են, որ այն իրականացրել են երիտթուրքական կազմակերպության անդամները (տե՛ս Алькаева Л. О. Очерки по истории турецкой литературы 1908-1939 гг., М., 1959, с. 87): Որոշ հետազոտողների մոտ անճշտություն կա՝ կապված մահափորձի թվականի հետ: Մի շարք թուրք ուսումնասիրողներ նշում են 1906 թվականը (տե՛ս Akyüz Kenan, Teyfik Fikret, Ankara, 1947, s. 84, Şükrü Kemalettin, Teyfik Fikret, Hayatı ve Şiirleri, İstanbul, 1931, s. 45, Teber Serol, Aşiyandaki Kâhin, Teyfik Fikretin Melankolik Dünyası, İstanbul, 2002, s. 161): Նույն թվականը հիշատակում է նաև խորհրդային արևելագետ Ալկասան (տե՛ս Алькаева Л. О., նշվ. աշխ., էջ 87): Մինչդեռ Ալկասայի և Բարբանի համատեղ մեկ այլ աշխատության մեջ նշվում է 1901 թվականը (տե՛ս Алькаева Л. О., Бабаев А. Турецкая литература. Краткий очерк, М., 1967, с. 57): Խորհրդային մեկ այլ հեղինակ Կյամիլը ևս նշում է 1901 թվականը (տե՛ս Кямилев Х. Общественные мотивы в турецкой поэзии (конец XIX – середина XX века), М., 1969, с. 26):

¹⁵ Danişman Zuhuri, Sultan İkinci Abdülhamid Han, İstanbul, 1966, s. 174.

գրավել Արևմտյան երկրների ուշադրությունն ու ապահովել վերջիններիս միջամտությունն այդ գործին»¹⁶: Ըստ թուրք հեղինակների՝ «Հայերի նպատակը Անատոլիայի»¹⁷ այսպես կոչված վեց վիլայեթների (*Vilâyat-ı Sitte/ Altı Vilayet*) շրջանում հայկական պետության ստեղծումն է»¹⁸: Մեմեթ Ֆուաթը գրում է, որ համիդյան բռնապետության դարաշրջանում տիրող «խավարի պայմաններում» մահափորձն այս տեսանկյունից դիտելու հնարավորությունը բացակայում էր¹⁹: Իսմայիլ Փարլաթըրը պնդում է, որ Թ. Ֆիքրեթը, անտեղյակ լինելով հայկական լոբբիի «գարշելի ձգտումներին», նման բանաստեղծություն է գրել, որը միայն Համիդի հանդեպ ունեցած աստելության արդյունք էր²⁰: Ի դեպ, մինչև այսօր էլ շարունակվում է փաստերի նենգափոխումը: Թուրքական “Yeni Çağ” պարբերականն իր «Հայ դավաճաններին «փառապանծ որսորդ» անվանող մեծ պոետը» հոդվածում, փորձելով մանրամասնել մահափորձի իրողությունը, գրում է, որ հայկական գաղտնի կազմակերպության անդամները պայքարում էին «Արևելյան Անատոլիայում» անկախ Հայաստան ստեղծելու համար և Արդուլ Համիդին ամենամեծ արգելքն էին համարում: Այդ պատճառով պլանավորում էին նրան վերացնել, ինչին «անտեղյակ» էր Թ. Ֆիքրեթը²¹:

«Հապաղման մի ակնթարթ» բանաստեղծության մեջ կարդում ենք. «Ey darbe-i mübeccele, ey dūd-i müntakim (Kimsin? Nesin?... Bu salvete sâik, sebeb ne? Kim?) Հէյ, փառապանծ պայթյուն, հե՛՛՛՛՛ն, փառապանծ պայթյուն, հէյ վրիժառու ծուխ / Ո՞վ էս, ի՞նչ էս... ո՞վ է քեզ»²² մշտնջողական հարցը չպետք է շփոթել սովորական հարցի հետ: Հասկանալի է, որ հարցը տրվում է խոսքի հուզական շեշտադրությունն ընդգծելու, խոսքին «բարձր լարվածության» տրամադրություն հաղորդելու, երևույթի իմաստը հնարավորինս բարձրաձայնելու, հետաքրքրություն գրգռելու և հասարակական լայն հնչեղություն տալու համար: Հռետորական հարցը հաճախ ենթադրում է որոշակի պատասխան, ինչը տեսնում ենք նաև այս

¹⁶ Տե՛ս **Danişmend İsmail Hâmi**, *İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi*, cilt IV, İstanbul, 1955, s. 348. Նույն հեղինակին հիշատակում է նաև Մեհմեթ Քափլանը՝ **Kaplan Mehmet**, *Tevfik Fikret: Devir-Şahsiyet-Eser*, s. 160. Հմմտ. նաև **Fuat Memet**, *Tevfik Fikret, Yaşamı, Düşünce Dünyası, Sanatçı, Kişiliği, Seçme Şiirleri*, İstanbul, 2008, s. 46.

¹⁷ Փոքր Ասիա թերակղզու արևմտյան հատվածը հայտնի է Անատոլիա անվամբ՝ Հունաստանից արևելք ընկած լինելու պատճառով (հունարեն *Anatole* նշանակում է արևելք): Հետագայում Անատոլիա կոչվեց նաև Փոքր Ասիան: Այս տարածքում հայտնված թուրքերն Անատոլիա (*Anadolu*) են անվանում ասիական Թուրքիան՝ ներառյալ Արևմտյան Հայաստանը և քրդաբնակ տարածքները: Փաստորեն, թուրքերն աղավաղել են այս տեղանվան իմաստային բովանդակությունը: Արևելյան Անատոլիա (*Doğu Anadolu*) անվան տակ թուրքերը ներառում են Արևմտյան Հայաստանի տարածքը:

¹⁸ **Fuat Memet**, նշվ. աշխ., էջ 46:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ **Parlatur İsmail**, *Tevfik Fikret*, Ankara, 2004, s. 73.

²¹ *Yeni Çağ*, 17, Aralık, 2008.

²² **Tevfik Fikret**, նշվ. աշխ., էջ 305:

բանաստեղծության մեջ: Բանաստեղծի վերոնշյալ հարցադրումից հետո կարդում ենք. «Arkanda bin nigâh-i tecessüs, ve sen nihân (Bir dest-i gaybi andırıyorsun, rehâ-feşân) Mâlik sesin o sûret-i radîn-i gayza ki (Her yerde hiss-i hakk u halâsin muharriki) Քեզ ուղեկցող հազար հետաքրքրասեր հայացք կա, իսկ դու գաղտնի / Մի անտեսանելի ձեռք ես հիշեցնում՝ ազատագրող / Քո տիրապետող ձայնն այնպիսի ցասում է արտահայտում, որ / Սմեն տեղ ազատության իրավունքի զգացում է արթնացնում»²³: Ի դեպ, այս բանաստեղծության մեջ հռետորական հարցը, հռետորական բացականչությունը, դիքումը, ինչպես նաև անժամբեմանի²⁴ կիրառումն ինքնանպատակ չեն: Թ. Ֆիքրեթի նպատակն է խոսքին տալ առավել զգացմունքային երանգ, ընդգծել ու շեշտադրել երևույթի նշանակությունը:

Եվ վերջապես, թուրք հեղինակների համար «մութ ու անհասկանալի» է մնում՝ երբ արդեն հայտնի էր, թե ովքեր և ինչ նպատակով են իրականացրել մահափորձը, Թնֆիք Ֆիքրեթը ինչո՞ւ չի հրաժարվել այս բանաստեղծությունից՝ ներառելով իր հայտնի «Կոտրված քնար» ժողովածուի մեջ:

Որքան էլ մեծ լինի թուրք հեղինակների «զարմանքը», որքան էլ նրանք փորձեն հիմնավորել Թ. Ֆիքրեթի՝ այսպես կոչված «իրավիճակին տեղյակ չլինելու փաստարկը», միննույն է, բանաստեղծի քաղաքացիական կերպարն այլ բան է ասում. նա տեղյակ էր ժամանակի հրատապ խնդիրներին, և այս բանաստեղծությունը միայն Աբդուլ Համիդի հանդեպ ունեցած ասելության արդյունք չէր կարող լինել: Հնարավոր չէ Թ. Ֆիքրեթի հեղափոխամետ պոեզիան մղել անձնական, անհատական համակրանքների պարզունակ ոլորտ: Բանաստեղծը Օսմանյան կայսրության մայրամուտի փուլում թուրք «ազատական» մտավորականության հայտնի ներկայացուցիչներից էր և գեղարվեստական գրականության ու հրապարակախոսության մեջ նոր գաղափարների արտահայտող: Ապրելով ու ստեղծագործելով բռնապետական վարչակարգի օրոք՝ թուրք առաջադեմ բանաստեղծը, հրապարակախոսը, լրագրող-խմբագիրն ու մանկավարժը չէր կարող անտեղյակ լինել վաղուց «օդում կախված» հայկական խնդիրներին: Տարիներ շարունակ լինելով Օսմանյան կայսրության ամենաազդեցիկ ու ամենաառաջադեմ պարբերականի՝ «Մերվեթ-ի ֆյունուն»-ի²⁵ խմբագիրը՝ Թ. Ֆիքրեթը հանդես է եկել որպես տեղեկատվություն կրող, տեղեկատվություն արտահանող և ներմուծող (1901 թ. հանդեսը փակվեց սուլթանական կառավարության հրամա-

²³ Նույն տեղում, էջ 306:

²⁴ Անժամբեմանը (ֆրանս.՝ enjambement) գեղարվեստական արտահայտչամիջոց է, երբ բանաստեղծական միտքը չի ավարտվում մեկ տողով, այլ դրա շարունակությունը տեղափոխվում է հաջորդ տող:

²⁵ Fünun (արաբ.-օսմ.)՝ fen (գիտություն, արվեստ) բառի հոգնակին է: Այստեղից էլ «Մերվեթ-ի ֆյունուն» նշանակում է «գիտության (գիտելիքների) կամ արվեստների հարստություն»:

նով): 1890-ականների վերջերից Թ. Ֆիքրեթի քնարերգությունն ու հրապարակախոսությունը առանձնանում են քաղաքացիական շրջով ու հեղափոխական պայթույթով, այնուհետև՝ համիդյան բռնա-պետական վարչակարգի դեմ ուղղված սուր քննադատությամբ: Թ. Ֆիքրեթը դատապարտում է Օսմանյան կայսրությունում տիրող անարդարությունն ու անօրինականությունը, բռնությունն ու ժողովուրդների իրավունքների ոտնահարումը: Նա երկրի բարեկեցությունն ամենից առաջ կապում էր «սուլթանության»՝ որպես ինստիտուտի վերացման հետ: Թուրք լրագրող, հասարակական գործիչ և հրապարակագիր Սաբիհա Սերթելը նշում է, որ Թ. Ֆիքրեթը բռնապետության «...ամենահուժկու դարաշրջանում խիզախություն է ցուցաբերում ինչպես մի խռովարար՝ բանաստեղծություններ գրելով փառիշտի դեմ»²⁶: Իրավամբ, ուշադրության են արժանի «Մառախուղ» («Sis»)²⁷ և «Հին պատմություն» («Tarih-i Kadim»)²⁸ ազատախոհական ստեղծագործությունները, որոնք թուրք առաջադիմական գրականության պատմության մեջ Թ. Ֆիքրեթի անունն ամրագրեցին որպես քաղաքացիական քնարերգության առաջնեկներից:

Ճիշտ է, մահափորձի հետաքննությունը փոքր-ինչ ուշ բացահայտեց իրական «մեղավորներին», սակայն, ինչպես նույն թուրք հեղինակներն էին նշում, մահափորձը շարունակությունն էր հայազգի վրիժառուների իրականացրած գործողությունների: Եվ դժվար չէր Թ. Ֆիքրեթի նման քաղաքականապես թրծված մեկի համար հասկանալ, որ մահափորձը ևս հայ վրիժառուի ձեռքի գործը կարող էր լինել: Ավելին, բանաստեղծը չէր կարող անտեղյակ լինել այն իրադարձություններին, որոնք ցնցեցին աշխարհի քաղաքական միտքը: Նկատի ունենք Օսմանյան բանկի գրավումը, ռումբային սահաբեկչական հարձակումները Ստամբուլում, որոնք իրականացվում էին ոչ թե Օսմանյան կայսրության ծայրամասերում, այլ մայրաքաղաքում (մասամբ նաև ծովափնյա շրջաններում), որտեղ էապես զգացվում էր մեծ տերությունների քաղաքական ազդեցությունն ու տնտեսական ներկայությունը, և յուրաքանչյուր միջադեպ անմիջապես արձագանք էր ստանում Եվրոպայում:

Այսպիսով, անհիմն ենք համարում թուրք հեղինակների փաստերը՝ ապացուցելու, որ «Հապաղման մի ակնթարթ» բանաստեղծությունը միայն

²⁶ Sertel Sabiha, *Tevfik Fikret, İdeolojisi ve Felsefesi*, İstanbul, 1946, s. 26.

²⁷ Պետրոսյան Ս., Թնֆիք Ֆիքրեթի պոեզիայի որոշ առանձնահատկությունների շուրջ («Մառախուղ» բանաստեղծությունը) (Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VI, ՀՀ ԳԱԱ ԱԻ, Ե., 2009, էջ 323-330):

²⁸ Պետրոսյան Ս., Թնֆիք Ֆիքրեթի «Հին պատմություն» պոեմի և նրա լեզվաբանական առանձնահատկությունների մասին (ՀՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2009, N 3, էջ 269-273):

Աբդուլ Համիդի դեմ ունեցած աստելության արդյունք էր և ոչ թե հայ վրիժառուի մեծարման փաստ: Բանաստեղծությունը Թ. Ֆիքրեթի քաղաքական համակրանքների և կողմնորոշումների արդյունք էր, սկզբունքային դիրքորոշում, ազատական ձգտումների արտահայտություն: Եթե դուրս գանք պոեզիայի դաշտից, որտեղ Թ. Ֆիքրեթը ողջունել է վրեժխնդիր «հերոսին», ապա քաղաքական ու քաղաքացիական դիտանկյունից կարելի է ասել, որ նա անմեկին հայտարարել է իր համերաշխությունը Օսմանյան կայսրությունում ապրող հայատակ ժողովուրդների ձգտումներին:

Եվ վերջապես, մենք առավել կարևորում ենք գրական փաստը՝ «Հապաղման մի ակնթարթ» բանաստեղծությունը: Ավելի քան մեկ դար բազմաթիվ ժողովուրդներ և՛ բնագրով, և՛ թարգմանություններով հաղորդակցվում են այս հրաշալի բանաստեղծությանը, որտեղ գովերգվում են հայազգի վրիժառուն ու նրա սխրագործությունը:

ТУРЕЦКИЙ ПОЭТ ТЕВФИК ФИКРЕТ,
ВОСПЕВШИЙ АРМЯНСКОГО МСТИТЕЛЯ

ПЕТРОСЯН Т. Р.

Резюме

Покушение на султана Абдул Гамида (21 июля, 1905 год) послужило темой для стихотворения “Миг промедления” (“Bir Lvhza-i Te’ahhur”) известного турецкого поэта Тевфика Фикрета (1867-1915 гг.). Это стихотворение вызвало споры, став объектом яростной критики. Турецкая общественность обвиняла Тевфика Фикрета в том, что им восхвалялись как идея покушения, так и совершившая его конкретная личность, поскольку армянский мститель был назван турецким поэтом “славным охотником” (anlı avcı). Оппоненты Тевфика Фикрета утверждают, что поэт не знал реальных мотивов, побудивших к совершению покушения на Абдул Гамида.

На наш взгляд, комментарии турецких авторов, сводящиеся к тому, что целью написания данного стиха было восхваление армянского мстителя, лишены оснований. Однако обращение турецкого автора к этому инциденту, иллюстрирующему свержение тирании и провозглашающему идею свободы, является весьма красноречивым фактом.